Կրիպտոակտիվների ոլորտի կարգավորումների նախագծերի քննարկման մասին

2025-09-05

Ինչպես հայտնի է 2025թ. հուլիսի 4-ին ուժի մեջ է մտել «Կրիպտոակտիվների մասին» օրենքը: Կենտրոնական բանկը, հավատարիմ մնալով թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքներին, հայտարարում է հանրային քննարկում օրենքի կիրարկման համար անհրաժեշտ կարգավորումների նախագծերի շուրջ:

Առաջիկա ամիսներին նախատեսվում է հանրայնացնել և հրապարակել հետևյալ նախագծերը.

- կրիպտոակտիվների առաջարկի փաստաթղթի բովանդակության նկատմամբ պահանջներ,
- կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց (ԿԱԾՄԱ) գրանցման, լիցենզավորման ընթացակարգեր,
- ԿԱԾՄԱ-ների ղեկավարների գրանցման կարգ,
- ԿԱԾՄԱ-ների հաճախորդների միջոցների պաշտպանության կանոններ,
- ԿԱԾՄԱ-ների տնտեսական նորմատիվների, դրանց չափերի և հաշվարկման կարգ,
- ԿԱԾՄԱ-ների գործունեության նկատմամբ ըստ ծառայության կամ գործունեության մանրամասն պահանջներ,
- ԿԱԾՄԱ-ների գործառույթների պատվիրակման կանոններ:

Նշվածի համատեքստում Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Կրիպտոակտիվների առաջարկի փաստաթղթի բովանդակության նկատմամբ պահանջներ» կանոնակարգի նախագիծը՝ միաժամանակ հայտնելով նախագծի հանրային քննարկման գործընթացի մեկնարկի մասին:

Այսպիսով, հրավիրում ենք բոլոր շահագրգիռ անձանց իրենց դիտարկումներն ու առաջարկությունները ներկայացնել նախագծի վերաբերյալ մինչև ս.թ. սեպտեմբերի

19-ը՝ դրանք ուղարկելով էլեկտրոնային հասցեին՝ որպես նամակի թեմա (subject) նշելով «Կրիպտոակտիվների առաջարկի փաստաթուղթ»: Խնդրում ենք նամակում նշել անուն ազգանուն, առկայության դեպքում այն կազմակերպությունը, որը ներկայացնում եք, ինչպես նաև կոնտակտային տվյալ հետադարձ կապի հաստատման համար: Ներկայացված առաջարկությունները Կենտրոնական բանկի կողմից ամփոփելուց հետո կկազմակերպվի հանդիպում դիտարկումներով հանդես եկած անձանց և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ դրանք քննարկելու նպատակով, իսկ ստացված դիտարկումներն ու դրանց վերաբերյալ դիրքորոշումները կհրապարակվեն: